**Արձանագրություն N 2**
**ԱՔ-ԳՀԾՁԲ-22/15 ծածկագրով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Արմավիր

06 հուլիսի 2022թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Աբգարյան |
| Հանձնաժողովի Գնահատող անդամներ՝ | Մ. Մանուկյան, Ա. Գրիգորյան |
| Բացող անդամներ՝ | Ս. Առաքելյան, Ս. Հարությունյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Մ. Համբարյան |

**1. Հանձնաժողովի նիստի օրակարգը**
**(Ա. Աբգարյան)**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. ԱՔ-ԳՀԾՁԲ-22/15 ծածկագրով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման մասին,
3. Ներկայացված հայտերում՝ հրավերով սահմանված փաստաթղթերի մասին,
4. Անհամապատասխանությունները շտկելու մասին
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0***

**2. ԱՔ-ԳՀԾՁԲ-22/15 ծածկագրով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով գնանշման հարցման Ընթացակարգի հայտերի բացման մասին**
**(Ա. Աբգարյան)**

Սահմանված ժամկետում, սահմանված կարգով հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Հասցե, Հեռախոս | Էլ. փոստի հասցե |
|---|---|---|---|
| 1 | «Սուար» ՍՊԸ | Ք. Երևան, Շենգավիթ, Բագրատունյաց 15-54, Հեռ.՝ 094305353 | suro4350@gmail.com |
| 2 | «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ | Ք. Երևան, Կոմիտաս 54բ., Հեռ.՝ 093800009 | ekspertizaproektov@mail.ru |
| 3 | «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ | Արարատի մ., գ. Ոստան, Թեհլերյան 14, Հեռ.՝ 043600090 | gritig@inbox.ru |
| 4 | «ԱՍՏԻՃԱՆ» ՍՊԸ | Ք. Երևան, Թումանյան 32/1, Հեռ.՝ 098800080, 041777777 | astichan_ltd@mail.ru |

***Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:***

**3. Ներկայացված հայտում հրավերով սահմանված փաստաթղթերի մասին**
**(Ա. Աբգարյան)**

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում՝ հրավերով սահմանված փաստաթղթերն առկա են:

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում փաստաթղթերը կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, բացառությամբ «ՀՀ նախագծերի պետական

արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի, «Սուար» ՍՊԸ-ի, «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի հետևյալ փաստաթղթերի՝ **«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի** կողմից ներկայացված նախկինում կատարված նմանատիպ պայմանագրում բացակայում է պայմանագրի կատարման վերաբերյալ դուրս գրված Հաշիվ վավերագիրը, **«Սուար» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերում բացակայում են պայմանագրի կատարման վերաբերյալ դուրս գրված Հաշիվ վավերագրերը, **«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայում են հիմնական աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:***

## <u>4.Անհամապատասխանությունները շտկելու մասին</u>

**(Ա. Աբգարյան)**

**Քանի որ հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ, ուստի հանձնաժողովը որոշեց.**

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 41-րդ կետի համաձայն վերը նշված անհամապատասխանությունները շտկելու նպատակով ծանուցել «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ին, «Սուար» ՍՊԸ-ին և «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ին, որոնք պետք է ներկայացնեն շտկված փաստաթղթերը մինչև 07.07.2022թ. 16:30-ը ներառյալ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0***

## <u>5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին</u>

**(Ա. Աբգարյան)**

ԱՔ-ԳՀԾՁԲ-22/15 ծածկագրով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հուլիսի 7-ին ժամը 16:30-ին Արմավիրի համայնքապետարան, ք. Արմավիր, Հանրապետության 32 հասցեում:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0***

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ա. Աբգարյան

անդամներ՝ Մ. Մանուկյան

Ա. Գրիգորյան

Ս. Առաքելյան

Ս. Հարությունյան

Քարտուղար՝ Մ. Համբարյան